

**Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվության և փաստաթղթերի վերլուծություն**

Սեյրան Մինասյան

Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Թումանյանի շրջանում, Ալավերդի քաղաքից 29 կմ դեպի հարավ-արևմուտք: Հանքավայրին մոտակա բնակավայրերն են Թեղուտ (4 կմ հեռավորություն) և Շնող (6 կմ հեռավորություն) գյուղերը: Հանքավայրը գտնվում է Թեղուտ գյուղի համայնքի տարածքում: 2001 թվականի փետրվարին «Մանես և Վալլեքս» ՓԲԸ-ն (այժմ՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» կամ «Էյ-Մի-Փի» ՓԲԸ) մրցութային կարգով ստացել է 25 տարով հանքավայրի շահագործման լիցենզիա, որից հետո նախաձեռնել է հանքավայրի շահագործման նախապատրաստման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը: Մինչև 2014թ կատարվել են լրահետախուզման աշխատանքներ, որոնց արդյունքում (144 հորատանցք՝ 27,027 մ ընդհանուր երկարությամբ) ստացվել են պաշարների մասին հիմնավոր և անհրաժեշտ տվյալներ: Լեռնահանքային համալիրում արտադրական գործընթացը մեկնարկել է 2014թ. դեկտեմբերին:

2005թ. «Էյ-Մի-Փի» ընկերության պատվերով կատարվել է շրջակա միջավայրի վրա Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի ազդեցության գնահատումը և կազմվել է ՇՄԱԳ նախագիծ, որը ներկայացվել է փորձաքննության՝ ՀՀ ԲՆ: 2006թ. ապրիլի 3-ին ՀՀ ԲՆ («Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը) ՇՄԱԳ նախագծի վերաբերյալ տվել է թիվ ԲՓ-31 դրական փորձաքննական եզրակացությունը:

Թեղուտի հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի (տես Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի կառուցման աշխատանքային նախագծեր (9 հատորով), «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ, 2005-06 թթ.) վերաբերյալ 2006 թ. նոյեմբերի 7-ին ՀՀ ԲՆ տվել է թիվ ԲՓ-135 դրական փորձաքննական եզրակացությունը:

Տրված երկու փորձաքննական եզրակացություններում ներկայացվել են ընդհանուր առմամբ 8 փորձաքննական պահանջ, որոնցից կարևորներն են՝ շրջակա միջավայրի պահպանության գնահատումների խիստ հիմնավորումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության (օդ, ջուր, հող, աղմուկ և այլն) նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնավորվածության, բավարարության և արդյունավետության ապահովումը:

«Էյ-Մի-Փի» ընկերությունը հետագայում հայտարարեց հանքարդյունաբերության բնագավառում միջազգային առաջավոր փորձը որդեգրելու քաղաքականության մասին: Հայտարարված մոտեցումների ելնելով, ընկերությունը կազմել է իր գործունեության բնապահպանական գնահատում՝ համաձայն Համաշխարհային բանկի բնապահպանական գնահատման վերաբերյալ OP 4.01. ուղեցույցի: Միաժամանակ ընկերությունը հայտարարել է, որ ընդունում է և առաջնորդվելու է Միջազգային ֆինանսական կորպորացիայի (այսուհետ՝ ՄՖԿ) «Բնապահպանական և սոցիալական կայունության 01.01.2012թ-ի չափորոշիչներով»: 2012-2015 թթ ընթացքում «Էյ-Մի-Փի» ընկերությունը միջազգային փորձագետների և խորհրդատուների ներգրավմամբ, կազմել և ներկայացրել է ՄՖԿ 8 ստանդարտներին (տես հավելված 1) համապատասխան մի շարք փաստաթղթեր (տես հավելված 2):

Փաստաթղթերը, ընդհանուր առմամբ կազմում են ավելի քան 1300 էջ, ֆորմալ առումով կազմված են միջազգային ուղեցույցներին և ստանդարտներին համապատասխան: Սակայն մի շարք գնահատականներ ու հաշվարկներ չեն համապատասխանում իրականությանը, մասնավորապես Շնող գետի ջրային էկոհամակարգի վրա ազդեցության գնահատման հարցում: Օրինակ բնապահպանական կառավարման պլանի՝ 3.4. Ազդեցությունը ջրային ավազանի վրա բաժնում (տես էջ 29) ուղղակի ներկայացված է.

«Ջրի նորմատիվ որակը հսկողության գետահատածրում պահպանվում է նույնիսկ հաշվի չառնելով այդ բաղադրիչների ոչ կոնսերվատիվությունը: Քանի որ աղտոտող նյութերի հաշվարկային կոնցենտրացիաները մաքրված կեղտաջրերում ավելի ցածր են, քան թույլատրելի կոնցենտրացիաները, աղտոտող նյութերի հաշվարկային արտահոսքերը գտնվում են թույլատրելի սահմանային արտահոսքերի (ԹՄԱ) սահմաններում: Այսպիսով, մաքրված կեղտաջրերը Շնող գետը թափվելիս գետի ջրերի նորմատիվ որակը չի խախտվում»: (Թեղուտի հանքավայրը հյուսիս-արևելքից սահմանափակվում է Շնող գետով, որը լցվում է Դեբեդ՝ Թեղուտի հանքավայրից 5 կմ դեպի հյուսիս-արևմուտք):

Սակայն 2009-2015թթ. ընթացքում Շնող գետի ջրերի հիդրոքիմիական և հիդրոկենսաբանական որակի ցուցանիշների մեծությունների փոփոխությունները ցույց են տալիս, որ Թեղուտի հանքավայրի շահագործման նախապատրաստական աշխատանքներն ու արդեն սկզբնական փուլի շահագործումը էական բացասական ներգործություն ունեն Շնող գետի ջրային էկոհամակարգի վրա, (տես http://aarhus.am/?page_id=11310): Համաձայն նշված հետազոտության տվյալների՝ հանքարդյունաբերական գործունեության ընդլայնման հետ զուգահեռ, 2009-2015թթ ընթացքում, գետի ջրերի որակը անշեղորեն վատանում է: Ջրերում 2009 թվականի համեմատությամբ բարձրացել են Mn, Ni, Cu, Zn, As, Se, Mo, Pb տարրերի, սուլֆատ անիոնի տարեկան և ըստ ջրաբանական սեզոնների միջին կոնցենտրացիաները: Գետաբերանի հատվածում գետի ջրերի թափանցելիությունը և ջրածնային ցուցիչի արժեքները նվազել են, աճել են էլեկտրահաղորդականությունը և կախված մասնիկների կոնցենտրացիաների արժեքները: Գետաբերանում տեղի է ունեցել ջրային (հատակային ֆլորայի և ֆաունայի) կենսաբազմազանության կտրուկ անկում: **Շնող գետը ըստ Եվրոմիության ՋՇԴ մոտեցումների ներկայումս արդեն դասվում է ռիսկային ջրային մարմինների դասին:** Գետի ակունքային գոտու և գետաբերանի ջրերի որակի ցուցանիշների համեմատությունը և գետավազանի որակի անկումը պայմանավորող ցուցանիշների համախումբը ցույց են տալիս, որ գետի ջրային էկոհամակարգի որակի անկման պատճառը Թեղուտի հանքավայրի շահագործման նախապատրաստումն ու բուն շահագործումն է: Ընդ որում, Թեղուտի հանքավայրի կողմից ճնշումը գետի ջրերի որակի և էկոհամակարգի վրա կրում է լայնածավալ, բազմակրոնպոնենտ բնույթ:

Հիմնական եզրակացություն. միջազգային ուղեցույցներով կազմված փաստաթղթերի առկայությունը և միջազգային առաջավոր, լավագույն փորձով առաջնորդվելու հայտարարությունները պատասխանատու հանքարդյունաբերական գործունեության, շրջակա միջավայրը աղտոտումից պաշտպանելու նպատակային միջոցառումների և բնապահպանական պլանների իրականացման համար ոչ մի երաշխիք չեն տալիս: Գործնականում միջազգային ստանդարտների ընդունումը կրում է ֆորմալ բնույթ, ՇՄԱԳ-ն ու մյուս ներկայացված փաստաթղթերը շրջակա միջավայրի իրական վիճակի հետ կապ

չունեն, իսկ շրջակա միջավայրը աղտոտվում է ինչպես ՀՀ տարածքում գործող մյուս հանքարդյունաբերական ձեռնարկությունների դեպքում:

Հավելված 1.

1. Performance Standard 1: Assessment and Management of Environmental and Social Risks and Impacts
2. Performance Standard 2: Labor and Working Conditions
3. Performance Standard 3: Resource Efficiency and Pollution Prevention
4. Performance Standard 4: Community Health, Safety, and Security
5. Performance Standard 5: Land Acquisition and Involuntary Resettlement
6. Performance Standard 6: Biodiversity Conservation and Sustainable Management of Living Natural Resources
7. Performance Standard 7: Indigenous Peoples
8. Performance Standard 8: Cultural Heritage

Հավելված 2.

1. Թեղուտի Լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարության եվ պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլան, 2015:
2. Թեղուտի Լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարության եվ պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման շահառուների ներգրավման պլան, 2015:
3. Teghout Waste Management Plan 2014.
4. Teghout Water Management Plan 2014.
5. Teghout Acid Generation Assessment, 2014.
6. Teghout Environmental and Social action Plan, Implementation Plan, 2012.
7. Teghout Integrated Management System Implementation Plan, 2013.
8. Teghout Mine Closure Plan, 2014.
9. Monitoring Plan for the Teghout Copper-Molibdenum Mine, 2012.

Սեյրան Մինասյան

12.12.2016